

6 ապրիլի 2006 թվականի N 449-Ն

ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ՕՏԱՐՄԱՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ԳԱԶԻ ՄԱԿԱԳՆԻ ՄԵՂՄԱՑՄԱՆ
ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետությունում բնական գազի սպառողներին մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը սպառվող բնական գազի դիմաց սուբսիդիայի կարգով գների տարբերությունը փոխհատուցելու նպատակով Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության կառավարությունը 2006 թվականի ապրիլի 10-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում բնական գազի սպառողների օգտին «Հայֆուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը կվճարի բնական գազի` Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագինը մեղմացնելու համար տրամադրվող սուբսիդիաներ` հետևյալ չափերով` ամսական մինչև 10000 նորմալ խոր. մետր սպառման դեպքում` 1000 նորմալ խոր. մետրի համար 90000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից` 25000 դրամի սուբսիդիա, ամսական 10000 նորմալ խոր. մետր և ավելի սպառման դեպքում` 1000 նորմալ խոր. մետրի համար 146,51 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը) սակագնից` 52,01 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ սուբսիդիա: Սույն կետով սահմանված` բնական գազի սպառողների օգտին պետության կողմից սուբսիդավորումը չի իրականացվում (սուբսիդիաներ չեն վճարվում)` արտահանման նպատակով էլեկտրաէներգիայի արտադրության համար սպառված բնական գազի դիմաց:

2. Առաջարկել «Հայֆուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը` ա) 2006 թվականի ապրիլի 10-ից մինչև 2008 թվականի դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում սպառված բնական գազի դիմաց սպառողներից վճարումները գանձել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի կողմից հաստատված սակագնից նվազեցված գներով` հետևյալ չափերով` ամսական մինչև 10000 նորմալ խոր. մետր սպառման դեպքում` 1000 նորմալ խոր. մետրի համար` 65000 դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը), ամսական 10000 նորմալ խոր. մետր և ավելի սպառման դեպքում` 1000 նորմալ խոր. մետրի համար` 94,5 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառյալ ավելացված արժեքի հարկը). բ) սուբսիդիաների տեսքով պետության վճարած գումարը սպառողների փաստացի սպառման ծավալը գերազանցելու դեպքում ավելի մասը հաշվարկել որպես կանխավճար` 2009 թվականի համար:

3. Դադարեցնել «Հրազդան 5» ԾԻԳ» պետական հիմնարկի գործունեությունը` հիմնարկի ամբողջ գույքը (այսուհետ` «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիր) ամրացնելով Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը: «Հրազդան 5» ԾԻԳ» պետական հիմնարկի գործունեության դադարեցման ժամկետ սահմանել սույն որոշման 4.3-րդ կետում նշված առուվաճառքի պայմանագրի համաձայն «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի գնորդին հանձնման պահը: Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին` Հայաստանի Հանրապետության կառավարություն

ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից «Հրազդան 5» ՕԻԳ» պետական հիմնարկի՝ մինչև վերջինիս գործունեության դադարեցման պահին անհրաժեշտ պահպանման ծախսերի համար (ներառյալ աշխատավարձի վերջնահաշվարկի գումարները) համապատասխան գումար հատկացնելու վերաբերյալ: (3-րդ կետը լրաց. 18.08.06 N 1156-Ն)

4. Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին՝

4.1. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության ենթակայության՝ «Հրազդան 5» ՕԻԳ» պետական հիմնարկից ընդունման-հանձնման ակտով ընդունել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրը և մուտքագրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության հաշվեկշիռ՝ հաշվեկշռային արժեքով:

4.2. Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի հետ համատեղ ապահովել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի (անշարժ գույքի մասով), ինչպես նաև դրանում զբաղեցված համապատասխան հողամասի նկատմամբ պետական սեփականության իրավունքի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով գրանցումը (այսուհետ՝ գրանցում) և համապատասխան սեփականության վկայականի ստացումը: Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարին՝ գրանցման հետ կապված պետական տուրքի և այլ վճարումների կատարումն ապահովելու համար Հայաստանի Հանրապետության կառավարություն ներկայացնել առաջարկություն Հայաստանի Հանրապետության 2006 թվականի պետական բյուջեով նախատեսված Հայաստանի Հանրապետության կառավարության պահուստային ֆոնդից Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարությանը համապատասխան միջոցներ հատկացնելու վերաբերյալ:

4.3. Ռուսաստանի Դաշնության «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության առաջարկած՝ «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերության կամ Հայաստանի Հանրապետության տարածքում «Գազպրոմ» բաց բաժնետիրական ընկերության հիմնադրած նոր իրավաբանական անձի հետ (համապատասխան անձն այսուհետ՝ գնորդ) կնքել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի առուվաճառքի պայմանագիր՝ հետևյալ էական պայմաններով՝

ա) գույքային համալիրի գինը կազմում է 248,8 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ ներառյալ սեփականության իրավունքով տրամադրվող հողամասի կադաստրային արժեքը (այսուհետ՝ կադաստրային արժեք)։

բ) գինը վճարվում է Հայաստանի Հանրապետության դրամով՝ 2006 թվականի ընթացքում՝ 58,8 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, 2007 թվականի ընթացքում՝ 70 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, 2008 թվականի ընթացքում՝ 120 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ։

զ) գույքային համալիրի զբաղեցրած և օգտագործման համար անհրաժեշտ հողամասի մի մասը գնորդին տրամադրվում է սեփականության իրավունքով, մյուս մասը՝ անհատույց մշտական օգտագործման իրավունքով (որի մասին գնորդը պետք է օգտագործման պայմանագիր կնքի Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի հետ)։

դ) անշարժ գույքի մասով առուվաճառքի պայմանագրի նոտարական վավերացման և դրանից ծագող իրավունքների պետական գրանցման ծախսերը կատարվում են գնորդի հաշվին։

ե) գնորդը պարտավորվում է շարունակել անավարտ շինարարության օբյեկտի կառուցումը, մինչև 2008 թվականն ապահովել գույքային համալիրի շահագործման հանձնումը՝ դրանում տեղակայելով մինչև 140 մեգավատ էլեկտրական հզորությամբ գազատուրբին՝ նպատակ ունենալով նվազեցնելու էլեկտրաէներգիայի արտադրության վառելիքային ծախսերը։ Գնորդի կողմից սույն պայմանի կատարման վերահսկողությունը վաճառողի անունից իրականացնում է Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարությունը։

4.4. Գնորդի կողմից ստացվող պայմանագրի գնի վճարումները հաշվեգրել Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության արտաբյուջետային բանկային հաշվին, որից՝ ա) ընդամենը 188,8 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ վճարել «ՀայՌուսգազարդ» փակ բաժնետիրական ընկերությանը, որպես բնական գազի սպառողներին գազի սահմանված սակագնի մասնակի փոխհատուցում՝ սույն որոշման 1-ին կետում նշված չափերով, որից՝ 2006 թվականի ընթացքում՝ 58,8 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի և կադաստրային արժեքի տարբերությունը, 2007 թվականի ընթացքում՝ 60 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ՝ ավելացրած (գումարած) կադաստրային արժեքը, 2008 թվականի ընթացքում՝ 70 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (վճարումները կատարվում են համապատասխան գումարների մուտքագրման օրվանից 3 բանկային օրվա ընթացքում)։ բ) ընդամենը 60 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ (ներառում է կադաստրային արժեքը) վճարել Հայաստանի Հանրապետության պետական բյուջե, որից՝ կադաստրային արժեքը՝ 2006 թվականին, 10 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի և կադաստրային արժեքի տարբերությունը՝ 2007 թվականին, 50 մլն ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամը՝ 2008 թվականին (վճարումները կատարվում են համապատասխան գումարների մուտքագրման օրվանից 3 բանկային օրվա ընթացքում)։

5. Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարին՝

ա) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարի հետ համատեղ ապահովել «Հրագրանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի հանձնման կապակցությամբ անհրաժեշտ հանձնաժողովների ձևավորումը և դրանց գործողությունների համակարգումը։

բ) Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարին և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին ներկայացնել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի գնորդին սեփականության և օգտագործման իրավունքով տրամադրվող հողամասերի սխեմաները («Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (Հրազ. ՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության հետ փաստացի համատեղ օգտագործվող հողամասերը՝ ներառյալ վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցուղիների սպասարկման հողամասերը, գնորդին տրամադրվում են բացառապես անհատույց մշտական օգտագործման իրավունքով)։

գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել «Հրազդան 5» ՄԻԳ» պետական հիմնարկի լուծարման աշխատանքների իրականացումը։

6. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետին՝ գնորդի հետ կնքել «Հրազդանի 5-րդ էներգաբլոկ» գույքային համալիրի զբաղեցրած հողամասի անհատույց մշտական օգտագործման պայմանագիր՝ ըստ Հայաստանի Հանրապետության էներգետիկայի նախարարության կողմից ներկայացված սխեմաների (անհատույց մշտական օգտագործման իրավունքով տրամադրվում են Ռուսաստանի Դաշնությանը պատկանող «Հրազդանի էներգետիկ կազմակերպություն (Հրազ. ՋԷԿ)» բաց բաժնետիրական ընկերության հետ փաստացի համատեղ օգտագործվող հողամասերը՝ ներառյալ վերգետնյա և ստորգետնյա հաղորդակցուղիների հողամասերը)՝ ապահովելով ստորագրված պայմանագրի նոտարական վավերացումը և գույքային իրավունքների պետական գրանցումը՝ գնորդի հաշվին։

7. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության

վարչապետ

2006 թ. ապրիլի 28

Երևան

Ա. Մարգարյան